

տուածններու եւ քուրմերու. կարելի է օ-
րինակները դեռ աւելի բերել: Շնորհիւ ա-
ւանդութեանց վրայ կառչած ըլլալնուն,
որ Արեւելքի յատուկ է ամէն առեւ, 1700
տարի առաջնուն սովորութիւնները կըր-
նային Յիսուսի ժամանակ մնացած ըլլալ,
ինչպէս որ նոյն տրամաբանութեամբ՝
Նոր կտակարանի շատ մը սովորոյթներ
դեռ կենդանի են Պաղեստինի մէջ: Դո-
մինիկեան կարգէն Հ. Ժանոսէն այս մա-
սին դրած է հիանալի հատոր մը, ուր կը
նկարագրէ Մովսրու երկրին այսօրուան
վրանաբնակները⁵:

ՀԱՐԱՆԻՔԻ ՀԱՏՈՒԾԸ

ՄԱՏԹԵՈՍ ԻԲ. 1-13

Յիսուս դարձեալ խօսիլ սկսաւ անոնց առակներով եւ ըսաւ. «Յերկէքի արքայութիւնը նման է թաղաւորի մը, որ իր որդիակն հարսանիքն ըրաւ: Ծառաններ զրկեց հարսանիքի կանչելու ըրաւ: Ծառանք, լալց անոնք հուղեցին զալ: Դարձեալ ուրիշ ծառաներ զրկեց պատուրելով. Ըսէ՛ք հրաւիրեալներուն... Հրամեցէ՛ք հարսանիքի: Բայց անոնք հարձուորութին չառաւ՝ մէկը ագարակը դնաց, միւսն իր առուտոցին: Եւ ուրիշներ բռնիկով աւանդ տան ծառանեցին ու սպաննեցին: ... Եւ արաստ է, լալց հրաւիրեալները արժանի չէին. դացէ՛ք, ուրեմն, ճամբաներու զլուխները եւ գլուխները կանչեցէ՛ք հարսանիքի: Ծառանները ճամբաներէ վրայ ելլելով, ո՛վ որ դռան՝ հաւաքեցին, չարեր եւ բարիներ, ու հարսանիքը լեցեցեցաւ. կոչանկաններով: Երբ թաղաւորը մտաւ ընդմիջեալ կանչեց. «Հոն նշմարեց մարդ մը, որ հարսանիքի զգեստ չէր հագած եւ ըսաւ անոր. Ընկեր, ի՞նչպէ՞ս հոս մտար առանց հարսանիքի ըզգեստ ունենալու. մարդը պատգամեցաւ: Այն աւանդը ոտքերն ու ձեռքերը եւ հանեցէ՛ք արտաքին խաւարին մէկ. Հոն թող լալ ու ակրաները կը ճախն»:

5. «Նախիկին ազգային սովորութիւնք հարսանեաց» տիտղոսի տակ, ձեռագրէի մը մէջէն հայկական Ռեթօթ թուականով (1610), կը համառօտէ «Բաղ-մավէպ»ի յօդուածագիրը (1889, էջ 232), ա-մուսնութեան խորհուրդին վրայ ճառ մը, որ Տաթևացիին կամ անոր ժամանակակից մէկու մը ըլլաւ կ'ենթադրէ: Ճառին հեղինակը իւրա-քանչիւր սովորութեանց մեկնութիւնը կը զննէ եւ Ս. Գրքի վկայութիւններով եւ օրինակներով

Այս թափառաշրջիկներու մէջ մնացած է ղեռ հին սուլորուծութիւնը. չէլիւր իբր ցեղապետ՝ երբ կոչունքի հանդէսներուն հրաւիրէ, ինքը հրաւիրեալներուն հետ չի նստիր, այլ կը շրջի անոնց մէջ եւ կը հակէ որ ամէն ինչ լաւ երթայ, ճիշտ ինչպէս Մատթէոսի կոչնատէրը կ'ընէ (ԻՔ. 11) երբ կ'անդրադառնայ կարգուձեւի անպահպանութիւնը:

TOMMASO FEDERICI

ԹՐԳՄ. Հ. ՔԵՐՈՒՄԵ ԶՐԱՔԵԱՆ

ՀԱՅԿԱՆ ԺԴ. 15-24

Սեղանակիցներէն մէկը այս խօսքը լսելով՝ ըսաւ. «Երանի՜ր անոր որ Աստուծով արգայութեան մէջ ճաշ պիտի ուտէ»։ Յիսուս պատասխանեց. «Մարդ մը մեծ ընթերցի պատրաստեց եւ շատեր հրաւիրեց։ Ընթերցի ժամուս, իր սպասաւորը զրկեց հրաւիրելուհներուն՝ ըսելով. Եկէ՛ք, ահա ամէն ինչ պատրաստ է։ Բայց մէկիկ մէկիկ ամէնչէն ալ սկսան հրաժարել։ Առաջինն ըսաւ. Աղարակ դնեցի եւ պէտք եմ երթալ տեսնել. Կ'աղագհեմ, հրաժարած համարէ՛ զիս։ Միւսը ըսաւ. Հինգ լուծ գն դնեմ եւ կ'երթամ զանոնք փորձելու. կը խղրեմ, հրաժարած նկատէ՛ զիս։ Ուրիշ մըն ալ ըսաւ. Կին առի, ուստի չեմ կրնար զալ։ Եւ սպասաւորը զառնալով՝ պատմեց իր տիրոջ այս բոլորը։ Այն ատեն զնա՛ թաղաքին հրապարակները եւ փողոցները եւ հոս մտցուր աղքատները, խեղերը, կաղերն ու կոյրերը։ Սպասաւորը ըսաւ. Տէ՛ր, ինչ որ հրամայեցի՛ր՝ կատարուեցաւ եւ զեռ տեղ կայ։ Տէ՛րն ըսաւ. սպասաւորի՛ն. Գնա՛՜ ճամբաներն ու ցանկապատները եւ ստիպի՛ր՝ որ մտնեն, որպէս զի տունս լեցուի։ Ի՞նչեմ ձեզի, որ այն հրաւիրեալներն ոչ ոք իմ ընթերցէս պիտի ճաշակէ»։

Կը Հաստատուէ: Ասիկից զատ Հարսանիքի Հանդէս-
ներուն Հայկական Հին սովորութեան նմոյշ մը
նկարագրաբար է «Բաղմամլէպ» շուրջ դար մը ա-
ռաջ, «Հանդէս Հարսանեաց Մուշի զաւառի մէջ»
տիտղոսով (1867, էջ 307): Աւելի մանրամաս-
նութիւններու համար, տե՛ս Հ. Վ. Հացունիի
«Հայունհին պատմութեան աղբէ», Վենետիկ,
1936, էջ 71-79, եւ «Պոմ. հին հայ տարազին»,
1924, էջ 296-300:

ԶԵՔՈՒՇՆ ԱՆԻՐԱԿՈՒԱԾ

Չնքուշը, որ ժԱ. դարու վերջին քա-
ռորդէին, Անիէն դադրող խումբ մը հայ
կաշկերօծներու կողմէ հիմնուած է Բնա-
բեղի աւերակներուն վրայ¹, դուրս է ձգ-
ուած եւրոպական և ամերիկեան քարտէս-
ներէ :

Թուրքերոյ կողմէ մեր ծննդավայրի շէր-
ջանակը - Խարբերդէն Տիգրանակերտ -
գրաւուելէ (1514) յետոյ, ԺԶ-ԺԹ դարի
սկիզբը, Չնքուշ տեղական թուրք վար-
չութիւն ունեցած չէ, այլ կառավարուած
է բնիկ աւանապետներով - նախ Հայ Իշ-
խան՝ Ըլլայով բնակչութեամբ միատարր
Հայ -, յետոյ՝ մահմետական Պէյ: Իսկ
Թրքական վարչութիւն հաստատուելէն
ետքն ալ, մինչեւ Մեծ Եղեռնը (1915),
եղած է միւսիրութիւն, կառավարական
ամենացած աստիճանի վարչութիւն, յա-
տուկ ոչ թէ զիւղաքաղաքի կամ քաղաքի,
այլ 1-200 տուննոց գիւղերու: Եւ այս՝
հակառակ այն իրողութեան, որ Չնքուշը
այդ դարերուն միշտ ունեցած է 10-000է
աւելի բնակչութիւն²:

Թէ ի հեճուկս հայերուն է եղած այս
կարգադրութիւնը, որ աննպաստ էր հա-
յոց ո՛չ միայն քաղաքականապէս այլ նաեւ
տնտեսապէս, յայտնի է այն իրողութե-

նէն, որ Զնքուշի հայերը միշտ բողոքած են անոր դէմ: Այդպիսի բողոքի մը կը հանդիպինք Զնքուշէն Դեկտ. 1, 1908 թվականի երկար թղթակցութեան մը մէջ: Կ. Պոլսոյ հայոց Պատրիարքին ներկայադուած 6 կէտերէն 4րդն է հետեւեալը.

«4 - Կը խնդրեմք, որ տեղս Գայմագա-
մուքեան վերածուի՝ բուրք աղաներու
բռնակալութիւնը հակազդելու, եւ եթէ
կարելի է Մամուրէք իւր Ազիզի (Խար-
բէրդ) կուսակալութեան կցուի, քանի որ
քէ մօտաւորութեան եւ քէ առեւտրական
տեսակէտիւ այնտեղի հետ աւելի հաղոր-
դակցութեան մէջ ենք («Մէմուրայի Այս-
սէն», 1908, թիւ 629) :

Թուրք կառավարութեան այս վարչա-
կան կարգադրութիւնը, միացած զէպի
Չնքուշ ուղեւորութեան ճանապարհներու
անապահովութեան՝ աւաղ ա կ ա բ ար ո յ
քուրտներով շրջապատուած ըլլալով,
պատճառ եղած է, որ օտար – եւրոպացի
եւ ամերիկացի – ուղեւորներ մինչեւ Չըն-
քուշ չճամբորդեն, մանաւանդ երբ կառա-
վարութիւնը չէր երաշխաւորեր անոնց
կեանքի անվտանգութիւնը, և օտար պատ-
մութիւններէն ու քարտէսներէն դուրս
ձգուի Չնքուշը:

Այս թիւին մէջ չեն թւրաց 300 տուները: Դարձեալ, Բիւզանդեան, 1909, Նոյ. 10/23 թուին մէջ, Զեքուչի Հայոց Առաջն. փոյս.՝ Եղբայր, Հայ-խոյովմ. Առաջն. փոյս.՝ Անտոնի, եւ բոլոր. Հայոց հոգեւոր պետ՝ Արմենակի ստորադրութեամբ նամակի մը մէջ՝ Զեքուչի բնակչութիւնը կը յիշուի «1500 տուն բնակիչ ունեցող»: Իսկ Զեքուչի իւրաքանչիւր հայ տան անդամներու թիւը միջին հաշուով 8-10 էր, համաձայն միախոնարհներու մարդահամարին:

- [illegible]

